



ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղիկով հիվանդ անձանց համար

Այս ուղեցույցն այն մարդկանց համար է, ում մոտ ախտորոշվել է կապիկի ծաղիկ: Սա նաև այն մարդկանց համար է, ովքեր կասկած կա, որ վարակված են կապիկի ծաղիկով՝ մինչև նրանք կստանան թեստի բացասական արդյունք: Մեկ այլ ուղեցույց հասանելի է այն մարդկանց համար, ովքեր գտնվում են առողջապահական կամ համատեղ կացության հաստատություններում, ինչպես օրինակ՝ ուղղիչ գաղութներում և անօթևանների կացարաններում:

Կարևոր է հետևել այս ուղեցույցին՝ մյուսներին պաշտպանելու և կապիկի ծաղիկ տարածումը նվազեցնելու համար:

ԻՆՉՊԵՍ Ե ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Կապիկի ծաղիկը կարող է տարածվել հետևյալ միջոցներով՝

- Մաշկը մաշկին շփում կապիկի ծաղիկ ունեցող անձի վերքերի և դրանց կեղևի հետ
- Մաշկը մաշկին շփում կապիկի ծաղիկ ունեցող անձի մարմնի հեղուկների և շնչառական արտազատուկների հետ, օրինակ՝ վերքերից դուրս եկող հեղուկ, թուք, որը բերանում շփվել է բերանի վերքերի հետ:
- Հպում/ծակոց սուր առարկաներով (օրինակ՝ ասեղ), որը դիպել է կապիկի ծաղկով հիվանդի մարմնի հեղուկներին կամ վերքերին:
- Շփում այն իրերի հետ (օրինակ՝ անկողնային պարագաներ, սրբիչներ, հագուստ), որոնք դիպել են կապիկի ծաղկով հիվանդի մարմնի հեղուկներին կամ վերքերին և չեն լվացվել: (Նշում՝ CDC-ն հաստատում է, որ այս եղանակով վարակվելու հավանականությունը շատ ցածր է:

Կապիկի ծաղիկով հիվանդը կարող է այն փոխանցել ուրիշներին սկսած այն պահից, երբ ախտանիշները հայտնվում են, մինչև երբ ցանն արդեն լավացել է, կեղևակալած մաշկն ընկել է և դրա տակից առաջացել է մաշկի նոր շերտ: Սա սովորաբար տևում է 2-4 շաբաթ:

Կապիկի ծաղկով հիվանդ հոդի անձը կարող է այն փոխանցել իր պտղին ընկերքի միջոցով: Այս վիրուսը կարող է փոխանցվել երեխային նաև ծննդաբերության ընթացքում կամ դրանից հետո նրա հետ սերտ շփման միջոցով:

Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Կապիկի ծաղիկի մասին ՌՏՅ-ները, որոնք հասանելի են այստեղ՝ ph.lacounty.gov/monkeypox:

Ե՛ՐԲ ՄԵԿՈՒՍԱՆԱԼ

Դուք պետք է մեկուսանաք տանը, եթե՝

- Կասկած կա, որ դուք վարակվել եք կապիկի ծաղկով՝ մինչև բժիշկը կբացառի դա:
- Դուք ունեք կապիկի ծաղիկ՝ մինչև կբավարարեք սահմանափակ կամ սովորական գործողությունները վերսկսելու չափանիշները, որոնք ներկայացված են ներքևում:

Մնացե՛ք տանը, քանի դեռ կարիք չունեք տնից դուրս գալու ծայրահեղ անհրաժեշտության կամ բժիշկի մոտ գնալու պատճառով:





ԿԱՊՈՒԿԻ ԾԱՂԻԿ

Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղիկով հիվանդ անձանց համար

Դուք կարող եք վերսկսել սահմանափակ գործողությունները տևից դուրս, եթե այս ԲՈԼՈՐ չափանիշները բավարարվում են.

- Դուք առնվազն 48 ժամ չեք ունեցել ջերմություն կամ շնչառական ախտանիշներ՝ առանց ջերմիջեցնող դեղեր օգտագործելու, ԵՎ
- Դուք առնվազն 48 ժամ չեք ունեցել նոր առաջացած վերքեր, ԵՎ
- Ցանկացած վերքեր, որոնք չեն կարող ծածկված լինել, ամբողջովին ապաքինվել են (օր.՝ կեղևակալած մաշկն ընկել է, և վերքերի հատվածում մաշկի նոր շերտ է ձևավորվել):

Երբ այս բոլոր չափանիշները բավարարեք, դուք կարող եք վերսկսել որոշ գործողություններ տևից դուրս, քանի դեռ դրանք չեն պահանջում սերտ ֆիզիկական շփում ուրիշներ հետ կամ ոչ կարևոր նպատակներով այցեր մտահոգիչ համարվող վայրեր (տե՛ս ստորև): Դուք պետք է հետևեք նախագրուշական քայլերին, որոնք ստորև նկարագրված են *Նախագրուշական քայլեր՝ տևից դուրս ձեռնարկելու համար* բաժնում:

Վերադարձ աշխատանքին

Եթե դուք բավարարում եք վերևում նշված բոլոր չափանիշները՝ տևից դուրս սահմանափակ գործողություններ վերսկսելու համար, դուք կարող եք անձնապես վերադառնալ աշխատանքի վայր, քանի դեռ*՝

- Ձեր աշխատանքի մեջ չի մտնում ֆիզիկական խնամք տանելը կամ ուրիշների հետ անմիջական ֆիզիկական շփում ունենալը, օրինակ՝ մերսում, դեմքի/մարմնի խնամք, սեռական բնույթի աշխատանք,
- Դուք չեք աշխատում մտահոգիչ համարվող վայրում (տե՛ս *Ներքևի շրջանակը*), ԵՎ
- Դուք ի վիճակի չեք հեռավար աշխատել:

*Աշխատանքի վերադառնալուց առաջ ճշտեք ձեր գործատուի հետ, քանի որ հնարավոր է, որ լինեն հավելյալ պահանջներ՝ համաձայն Cal/OSHA-ի և արտոնագրող ու հավաստագրող մարմինների:

Եթե դուք չեք բավարարում աշխատանքի վերադառնալու այս չափանիշները, **դուք չպետք է անձնապես վերադառնաք աշխատանքի** մինչև բավարարեք սովորական գործողությունները վերսկսելու չափանիշները (տե՛ս ստորև):

Վերադարձ դպրոց

8 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները, որոնք բավարարում են վերևում նշված բոլոր չափանիշները տևից դուրս սահմանափակ գործողությունները վերսկսելու համար, կարող են անձնապես ներկա լինել դպրոցում կամ այլ վայրերում (նախադպրոցական/ հետդպրոցական ծրագրեր), քանի դեռ չեն մասնակցում այնպիսի գործողությունների, որոնք ներառում են այլ մարդկանց հետ սերտ ֆիզիկական շփում, օրինակ՝ շփում պահանջող սպորտաձևեր:

8 տարեկանից փոքր երեխաները չպետք է անձնապես վերադառնան խնամքի կենտրոն կամ դպրոց մինչև բավարարեն տևից դուրս սահմանափակ գործողությունները վերսկսելու չափանիշները (տե՛ս ստորև):





Ստահոգիչ համարվող վայրեր

Ստահոգիչ համարվող վայրերը ներառում են՝

- Անօթևանների կացարաններ, ներգաղթյալների ապաստարաններ, արտակարգ իրավիճակների ապաստարաններ և թմրանյութերից բուժման բնակելի կառույցներ
- Առողջապահական հաստատություններ
- Նահանգային և տեղական ուղղիչ գաղութներ և կալանավայրեր
- Երկարատև խնամքի, չափահասների և տարեցների խնամքի հաստատություններ և տնային ծառայություններ, որոնք ներառում են ֆիզիկական խնամք
- Երեխաների խնամքի և նախադպրոցական հաստատություններ, որոնք զբաղվում են նորածիններից մինչև նախադպրոցական տարիքի երեխաների խնամքով: Ենթադրվում է, որ լինում է մարմնի հետ սերտ շփում տակդիրները փոխելու, զուգարանում օգնելու, կերակրելու, հիգիենայի հետ կապված և ընդհանուր շփման ժամանակ:
- K-12 դպրոցներ և այլ վայրեր (նախադպրոցական / արտադպրոցական ծրագրեր), որոնք զբաղվում են 8 տարեկան և ավելի ցածր տարիքի դպրոցական երեխաների խնամքով, ինչպես նաև ավելի մեծ այն երեխաների խնամքով, որոնք խնամելը պահանջում է սերտ ֆիզիկական շփում, եթե աշխատանքային պարտականությունները պահանջում են անմիջական ֆիզիկական շփում այսպիսի երեխաների հետ:

Պուք կարող եք վերսկսել ձեր սովորական գործողությունները, եթե՝

- Ձեր մաշկի բոլոր վերքերն ապաքինվել են (օր.՝ կեղևակալած մաշկն ընկել է, և վերքերի հատվածում մաշկի նոր շերտ է ձևավորվել) ԵՎ
- Առնվազն 48 ժամ չէք ունեցել որևէ այլ ախտանիշ, ներառյալ ջերմություն, առանց ջերմիջեցնող դեղերի օգտագործման:

Նշում սեռական հարաբերության մասին: Հավանականություն կարող է լինել, որ կապիկի ծաղիկը փոխանցվի սեռական զուգընկերոջը, նույնիսկ երբ ձեր վերքերը լավացած լինեն: Պատճառն այն է, որ վիրուսը կարող է մնացած լինել սերմնահեղուկում և սեռական օրգանների այլ արտազատուկներում: Եթե սեռական հարաբերություն եք ունենում մեկուսացման ավարտից հետո, խորհուրդ է տրվում 12 շաբաթ օգտագործել պահպանակներ՝ մինչև մենք կիմանանք ավելին:

ՀՐԱՅԱՆՔՆԵՐ

Նախագգուշական քայլեր՝ տանը

Հետևեք այս ցուցումներին՝ տանը մյուսներին պաշտպանելու համար, մինչև դուք կբավարարեք սովորական գործողությունները վերսկսելու չափանիշները:

- Ծածկեք մաշկի վերքերը (տե՛ս *մաշկի վերքերը* ստորև):
- Խոսափեք ձեզ հետ ապրող մարդկանց ու կենդանիների հետ սերտ շփումներից:
 - Բնեք առանձին սենյակում, եթե հնարավոր է:
 - Օգտվեք առանձին զուգարանից/լոգարանից, եթե հնարավոր է: Եթե ոչ, ապա ինքներդ մաքրեք և ախտահանեք այն և հետևեք CDC-ի ցուցումներին, որոնք ներկայացված են [Ձեր տան, աշխատավայրի և համայնքային այլ վայրերի մաքրումն ու ախտահանումը](#) կայքում:
 - Պակասեցրեք ժամանակը, որն անց էք կացնում մյուսների հետ նույն սենյակում: Եթե ձեր տան մեկ այլ անդամի հետ պետք է ժամանակն անցկացնեք նույն սենյակում, ծածկեք ձեր մարմնի բոլոր վերքերը հագուստով, ձեռնոցներով և/կամ վիրակապով, ինչպես որ հարկն է, և նվազեցրեք ցանկացած մարմնական շփում: Ավելին, դուք և ձեզ հետ նույն սենյակում գտնվող անձը (եթե 2 տարեկան է կամ ավելի մեծ) պետք է կրեք դեմքը լավ





ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղիկով հիվանդ անձանց համար

գրկող դիմակ կամ շնչառական միջոց (respirator), եթե ունենում եք ոչ կարճատև սերտ շփում (օր.՝ մինչև 6 ոտնաչափ): Հատկապես կարևոր է խուսափել երկարատև սերտ շփումից երեխաների, հղի, կրծքով կերակրող, իմունայաին անբավարարություն ունեցող անձանց հետ, ինչպես նաև այն անձանց հետ, ովքեր ունեն ատոպիկ մաշկաբորբի կամ Էկզեմայի պատմություն, քանի որ ծանր հիվանդանալու վտանգը նրանց համար կարող է ավելի մեծ լինել:

- Խուսափեք այլ մարդկանց հետ գրկախառնվելուց, մերսումից, համբուրվելուց, նույն անկողնում քնելուց, սեռական հարաբերությունից՝ հեշտոցային, բերանային կամ հետանցքային, սեռական օրգաններին կամ հետանցքին դիպչելուց և մաշկը մաշկին այլ սերտ շփումներ ունենալուց: Կենդանիների կամ այլ մարդկանց հետ համատեղ մի օգտագործեք իրերը, ներառյալ՝ անկողնային պարագաները, սրբիչները, հագուստը, սպասքը, բաժակները, էլեկտրոնային սարքերը և այլ առարկաներ, քանի դեռ դրանք չեն մաքրվել ու ախտահանվել (տե՛ս ստորև):
- Լվացեք և ախտահանեք իրերը, որոնք հագել եք կամ որոնց դիպչել եք, և մաքրեք ու ախտահանեք այն մակերեսները, որոնք շփում են ունեցել մաշկի վերքերի հետ: Մաքրեք ինքներդ, եթե հնարավոր է:
- Աշխատեք խուսափել աղտոտելուց պաստառապատ կահույքն ու ծակոտկեն այլ նյութերը, որոնք հնարավոր չէ լվանալ՝ այդ մակերեսները ծածկելով սավաններով, ներքնակի անջրանցիկ սավաններով, ծածկոցներով, բրեզենտե կտորներով:
- Օրվա ընթացքում հաճախ մաքրեք ձեր ձեռքերը, հատկապես վերքերի հետ անմիջական շփումից հետո: Տան մյուս անդամները նույնպես պետք է հաճախ մաքրեն իրենց ձեռքերը: Օգտագործեք ջուր և օճառ՝ 20 վայրկյան, կամ ձեռքերի ախտահանիչ, որը պարունակում է առնվազն 60% ալկոհոլ:

Նվազեցրեք վերքերը մարմնի տարբեր մասերում տարածելու վտանգը

- Խուսափեք կոնտակտային ռսայակներ (contact lenses) օգտագործելուց՝ վարակի տարածումը աչքերում կանխելու համար:
- Խուսափեք սափրելուց մարմնի այն հատվածները, որտեղ մաշկի վրա ցան/վերքեր կան:

Մաքրում, ախտահանում և աղբի թափում

- **Լվացքը** (օրինակ՝ անկողնային պարագաներ, սրբիչներ, հագուստ) կարելի է լվանալ սովորական լվացքի մեքենայում տաք ջրով և լվացքի միջոցներով: Կեղտոտ լվացքը չպետք է թափահարել կամ այնպես գործածել, որ նպաստի վարակիչ մասնիկների տարածմանը:
 - Եթե ձեր կեղտոտ լվացքին պետք է դիպչեն այլ մարդիկ, իրենց վարակվելու վտանգը նվազեցնելու համար նրանք պետք է կրեն ձեռնոցներ և դեմքը լավ գրկող դիմակ և ծածկեն մաշկի բոլոր այն բաց հատվածները, որոնք կարող են անմիջական շփում ունենալ կեղտոտ լվացքի հետ:
- **Մաքրեք և ախտահանեք հաճախակի շփման մակերեսները:** Եթե դա այլ մարդիկ պետք է անեն, նրանք պետք է առնվազն կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և շնչառական միջոցներ (respirators):
 - **Ափսեները և սպասքի պարագաները** պետք է տաք ջրով ու սպասքի օճառով լվացվեն աման լվացող մեքենայի մեջ կամ ձեռքով:
 - **Աղտոտված մակերեսները** պետք է մաքրվեն և ախտահանվեն: Կարելի է օգտագործել սովորական կենցաղային մաքրման/ախտահանման միջոցներից շատերը. տե՛ս [Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալության \(EPA\) կայքը](#)՝ EPA-ում գրանցված ախտահանիչների ցանկի համար:





ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղիկով հիվանդ անձանց համար

- Կարդացեք արտադրողի ցուցումները. համոզվեք, որ արտադրանքը համապատասխանում է ձեր մակերեսին:
- Նախապես մաքրեք մակերեսը օճառով և ջրով, եթե ցուցումներում նշված է նախնական մաքրումը կամ եթե մակերեսը տեսանելիորեն կեղտոտ է: Կեղտը կարող է թույլ չտալ ախտահանիչին գործել:
- Հետևեք շփման ժամանակի ցուցումներին. մակերեսը պետք է խոնավ մաա այնքան ժամանակ, որքան որ նշված է, որպեսզի ապահովվի արտադրանքի արդյունավետ ներգործումը: Անհրաժեշտության դեպքում նորից թրջեք:
- **Աղբ/Թափոններ:** Ունեցեք ներդիրով աղբարկղ այն սենյակում, որտեղ դուք մեկուսացել եք՝ ձեռնոցները, վիրակապերը, թղթե սրբիչները և սովորական աղբը նետելու համար: Կապեք տոպրակը և գցեք սովորական աղբարկղում: Աղբին դիպչելիս և այն թափելիս կրեք ձեռնոցներ:

Տե՛ս CDC-ի [Ձեր տան, աշխատավայրի և հանրային այլ վայրերի մաքրումն ու ախտահանումը](#)՝ կապիկի ծաղիկի ժամանակ և դրանից հետո մաքրման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և խորհուրդների համար:

Մաշկի վերքեր

Մաշկի չապաքինված վերքերը ծածկեք, որքան հնարավոր է, եթե ապրում կամ սերտ շփում եք ունենում ուրիշների հետ:

- Ծածկեք վերքերը հագուստով կամ մառախուղ՝ այն ամրացնելով առաջին օգնության երիզով կամ կիսաթափանց վիրակապով (այնպիսին, որը թույլ կտա, որ իր միջով օդ խաղա, բայց հեղուկ չթափանցի), օր.՝ Tegaderm™՝ մառախուղ կամ նմանատիպ այլ բարձրիկով:
- Կրեք ձեռնոցներ՝ ձեռքերի վերքերը ծածկելու համար:
- Կանխեք վերքերով այլ մարդկանց դիմաչելը և այն իրերին դիպչելը, որոնք հետո կարող են օգտագործվել ուրիշների կողմից:
- Վերքերը խնամելիս հետևեք բուժաշխատողի խորհուրդներին: Դիմեք բուժօգնության, եթե կա երկրորդային բակտերիական վարակի որևէ նշան, ներառյալ՝ հազ, թարախ, բարձրացող ջերմություն, կարմրություն և վերքի շրջանում մաշկի այտուցում:
- Ինքներդ փոխեք վիրակապերը, եթե հնարավոր է. կրեք մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ և դրանք դնե՛ք նետելուց հետո անմիջապես լվացեք ձեր ձեռքերը: Եթե օգնության կարիք ունեք վերքերը մաքրելու կամ վիրակապելու հարցում, ձեզ օգնող անձը պետք է առնվազն կրի մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ, երկարաթև հագուստ և դեմքը լավ գրկող դիմակ կամ շնչառական միջոց (respirator): Ցանկացած հագուստ, որը դիպչում է վերքերին վիրակապերը փոխելու ընթացքում, անմիջապես պետք է լվացվի: Աղտոտված թափոնների (օր.՝ վիրակապեր, ձեռնոցներ) հեռացման համար տե՛ս վերևում:

Դիմակներ և շնչառական միջոցներ (respirators)

Կրեք շնչառական միջոց կամ դեմքը լավ գրկող դիմակ ամբողջ ժամանակահատվածում, երբ շփվում եք այլ մարդկանց հետ՝ մինչև առնվազն 48 ժամ մաշկի վերքերն ապաքինված կլինեն և մյուս ախտանիշները վերացած կլինեն:

Հնարավոր է, որ կապիկի ծաղիկ վիրուսը փոխանցվի շնչառական արտազատուկների միջոցով: Ապահովության համար խորհուրդ է տրվում կրել դեմքը լավ գրկող դիմակ կամ շնչառական միջոց (respirator), քանի դեռ վարակող եք: Բացի այդ, տան մյուս անդամները նույնպես պետք է կրեն դեմքը լավ գրկող դիմակ կամ շնչառական միջոց, եթե նրանք սերտ շփում են ունենում ձեզ հետ: Լավագույն պաշտպանությունն ապահովում են շնչառական միջոցները, ինչպիսիք են՝ N95-ը, KN95-ը և KF94-ը:





ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղիկով հիվանդ անձանց համար

Ընտանի կենդանիներ

Հնարավոր է, որ ընտանի կենդանիները վարակվեն կամ ախտահարվեն վիրուսով վարակված անձի հետ սերտ շփման հետևանքով և վիրուսը փոխանցեն ուրիշներին: Խուսափեք ընտանի և վայրի կենդանիների հետ սերտ շփումից և հետևեք CDC-ի ուղեցույցին [Ընտանի կենդանիները՝ տանը](#) կայքում, եթե ընտանի կենդանի ունեք: Սերտ շփումը ներառում է կերակրելը, շոյելը, գրկելը, համբուրելը, լիզելը, նույն տարածքում քնելը և նույն ուտելիքը միասին ուտելը:

Եթե ձեզ անհրաժեշտ է զբոսանքի տանել ձեր կենդանուն, համոզվեք, որ ձեր մաշկի վերքերը/ցանավորված հատվածներն ամբողջությամբ ծածկված են հագուստով, ձեռնոցներով և/կամ վիրակապով, և կրեք դեմքը լավ գրկող դիմակ, եթե գտնվում եք ձեր տնից դուրս:

Նախագգուշական քայլեր՝ տնից դուրս ձեռնարկելու համար

Եթե մեկուսացած եք տանը, սակայն ծայրահեղ անհրաժեշտության կամ բժշկին տեսնելու պատճառով կարիք ունեք դուրս գալու՝

- Ինքներդ վարեք մեքենան, եթե կարող եք: Եթե հասարակական փոխադրամիջոցը կամ համատեղ երթևեկելը ձեր միակ հնարավոր տարբերակներն են, աշխատեք խուսափել մարդաշատ ժամերից: Որքան հնարավոր է հեռավորություն պահպանեք և բացեք պատուհանները:
- Ծածկեք չապաքնված բոլոր վերքերը հագուստով կամ վիրակապերով (տե՛ս [Մաշկի վերքերը](#) վերևում)
- Միշտ կրեք դեմքը լավ գրկող դիմակ կամ շնչառական միջոցներ, երբ շփվում եք այլ մարդկանց հետ (տե՛ս վերևում՝ [Դիմակներ և շնչառական միջոցներ \(respirators\)](#)):
- Հաճախակի լվացեք ձեռքերը օճառով ու ջրով կամ ձեռքերի ախտահանիչով և խուսափեք վերքերի հետ անմիջական շփումից:

Եթե բավարարում եք բոլոր [չափանիշները](#)՝ տնից դուրս սահմանափակ գործողություններ վերսկսելու համար՝

- Հետևեք վերևում թվարկված նախագգուշական քայլերին:
- Մի կատարեք այնպիսի գործողություններ, որոնք պահանջում են սերտ ֆիզիկական շփում (օր.՝ մերսում, մաշկի խնամք և այլն) և ոչ կարևոր նպատակներով մի այցելեք մտահոգիչ համարվող վայրեր (տե՛ս վերևի շրջանակը):
- Այլ մարդկանց հետ համատեղ մի օգտագործեք սրբիչները և անձնական այլ իրերը:
- Խուսափեք մարդաշատ վայրերից, ինչպիսիք են՝ բարերը, ակումբները, խնջույքները, շոգեբաղնիքները, հասարակական բաղնիքները:
- Խուսափեք ուրիշների հետ մաշկը մաշկին անմիջական շփումներից, ներառյալ համբուրվելուց, գրկախառնվելուց և սեռական հարաբերությունից:

Հայտնեք ձեզ հետ սերտ շփում ունեցած մարդկանց, որ իրենք շփվել են վարակակրի հետ

Կապ հաստատեք ձեր սեռական գուլգընկերների և ցանկացած այլ անձանց հետ, որոնց հետ ունեցել եք սերտ, մտերմիկ և/կամ երկարատև շփում ձեր ախտանիշների հայտնվելուց հետո: Դա արեք որքան հնարավոր է շուտ, որպեսզի նրանք կարողանան դիտարկել [պատվաստվելը](#) (եթե արդեն չեն պատվաստվել կապիկի ծաղիկի դեմ): Վարակի հետ շփումից հետո պատվաստվելը կարող է կանխել կապիկի ծաղիկով հիվանդանալը կամ հիվանդությունը դարձնել պակաս ծանր: Նրանք կարող են նաև ուշադիր լինել՝ կապիկի ծաղիկի ախտանիշները հայտնաբերելու համար:

Պատասխանեք Հանրային Առողջության գանգերին

Խնդրում ենք պատասխանել Հանրային Առողջության Վարչության գանգերին: Նրանք ձեզ հետ կապ կհաստատեն՝ հարցնելու ձեր գործողությունների մասին, որոնք ունեցել եք ախտանիշների հայտնվելուց առաջ և հետո: Սրա նպատակն է պարզել, թե ինչպես եք վարակվել, և հայտնաբերել այլ մարդկանց, որոնք





ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղիկով հիվանդ անձանց համար

կարող են վարակի հետ շփում ունեցած լինել: Նրանք ձեզ նաև կհարցնեն՝ արդյոք բուժման կամ հիվանդանոց գնալու կարիք ունեք:

ՅԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե հարցեր ունեք, լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ph.lacounty.gov/monkeypox կամ CDC-ի կապիկի ծաղիկի կայքէջ՝ [եղբ հիվանդ եք](#):

Եթե չունեք բժշկական ծառայությունների մատակարար կամ ունեք մեկուսացման հետ կապված հարցեր, գանգահարեք Հանրային Առողջության Վարչության Չանգերի Կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով, որը գործում է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը:

